

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

10.

25-ին յուլիսի 1866. Թիֆլիզ.

Իմ աղնիւ եղբայր,

Մտադիր եմ այսօր էգուց հրաժարուել թիֆլիսից և ուղղել դնացքս դէպի ի Դարաչիչակ, մեր զաւակները տեսանելու, բայց յառաջ քան ելքս այս տեղից, մի անհրաժեշտ կարիք է սրտիս, Քեզ իմ ազնիւ եղբօրս հաշիւ ու համար տալ այն ընդունելութեան վերայ, որ ես գտել եմ իմ հայրենի թիֆլիցում։ Դորա ընդհանուր տպաւորութիւնը իմ վերայ, կարող եմ ասել, շատ լաւ է։ Իմ ազգականքը բաւական բազմաթիւ են այստեղ, մի նորաբոյս բազմութիւն օրիորդների, որ արգեն կանայք են դարձած, որդիք ունին, փեսայք և հարսնիր, իմ հայրենական տունը եղբօրովս և պատուական հարսնովս թափում են իմ վերայ մի կախարդական դրախտի և երանութեան դալար վարդեր, սիրտս ծովացած է գեղեցիկ և հոգեպարար զգացողութեամբը, այս տեղ թափաւորում է մի երկնային խաղաղութիւն, ամենայն կողմից հանդիպում են ինձ սէր և բարեկամութիւն, համբոյր և զգուանոք քաղցր վատահութեամբ։ Մի սիրտ, որ այնքան տարիք ընտանեկան վայրենացուցիչ և ցամաքեցուցիչ պատերազմի մէջ կիսամնու և թառամած, մերձ ի մահ լինելով, այժմ վերստին կենդանանում է սիրոյ ջերմացուցիչ հրաշագործ զօրութեամբ, այս տեղ լուս են այն զգրգեցուցիչ և խառնակիչ փոթորիկները, որոց հազիւ կարողանում էր զիմանակ իմ հոգու անուր հաստատութիւնը։ այս տեղ շրջապատում է ինձ մի երկնաքաղաքացի հանդարտութիւն։ ինձ հասկանում են մարդիր և ես հասկանում եմ նորանց, որովհետեւ ամենայն բան ասվում է և լավում է պարզութեամբ և փոխադարձ վճառաւութեամբ։ և, որ մեծն է, մի անձնանուեր, հաւատացող և յաւացող սիրով։

Ի՞նչ ասեմ Չեղ, աղնիւ եղբայր, այն զանազան կարգի և պիճակի մարդերի մասին, որ անհատական հոսանքով դիմում են առիս, բերելով ինձ ողջոյն և մաղթանք, քահանայք, վարդապետք, աշխարհականք, արք և կանայք, միայն թէ վերջինքը աւելի մեծ բազմութեամբ, քան թէ առաջինքը, և ի հարկէ գորա պատճառը

շատ հասկանալի է. փոյթ չէ, որովհետեւ ժողովուրդը իմ կողմումն է և լսում է ինձ իրեն մի մարդարէի: Ինչքան նկատեցի մինչև այս բոպէս, ժողովուրդը այս տեղ յառաջ է դնացել. նորա մէջ կան մտածող և դատող մարդիկ, որոց խօսակցութիւնը պէսպէս ազգային խնդիրների վերայ շատ ուրախացնում են ինձ իւրեանց ուղղութեամբ և առողջութեամբ: Կանանց վիճակը, մեր հայկական օրինակի կացութիւնը ամենեին անմիմիթար եմ դատանում ես, որքան նորա իմ սրտին մօտ ու կից են իրեն դսաերք մեր նուիրական Հայաստանի, այնչափ ևս արտօւմ է հոգիս, տեսանելով այդ ծաղիկների ամենեին գունատութիւնը և թառամութիւնը մտաւորական մասին. ինչ մայրեր պիտի դրքա լինեն մեր նոր հայկական սերունդին, երբ որ չունին ոչինչ կրթութիւն, ոչինչ գաղափարք կեանքի և աշխարհի մասին, ոչինչ տեղեկութիւն մայրական սուրբ պարտիքի: Դոցա հետ չդիտէ մարդ թէ որ տեղից սկսանէ խօսք և ուր աւարտէ. նայելով դոցա քաղցր երեսին և տգէտ, անխոհ, անշարժ, կապած ու կաչկանդած հոգուն, ասում եմ, սիրտս գնում է վերայիցու: Անբաղդ օրիորդք Հայոց, որոց միակ փոյթը զարդեր ու հանդերձներ են և կուռեած են միայն լինելու իւրեանց ամուսնակիցների ծառայք, կոյր հնազանդողք. ինչ որ չատ անդամ եւրու պացոց մէջ մի կրծանական անհնազանդութիւն է, աղատութեան անունով, այս տեղ երեւում է մի կոյր, անարդիչ հնազանդութիւն, որով այս պահպանվում է մի մեռելական խաղաղութիւն, մի մեքենայական կարդ ընտանիքի մէջ. չէ, այս տեղ կանաչը չունեն ոչինչ յարգութիւն, իսկ եւրոպայում ամենայն յարգութիւն, ամենայն աղատութիւն, որ վերջապէս դէպ ի չարբ զործ զրուելով, կարող էր կործանել և այն կործանում է աշխարհը: Բայց ես մտածում եմ ամենեին այլապէս. այս տեղ կայ մի ելք հնարից. որ անպատճառ պիտի դործ զրուի. այդ է մի ուղղամիտ և առողջամիտ դաստիարակութիւն:

Անցւալ կիրակէ, ամւոււ 23-ին մեր, Մռակուայում ուսած, ծանօթ և բարեկամ երիտասարդք հացկերութիւն տուեցին ինձ Օրթաճայրւմ պլ. Թաւաշովի այգրւում. կը լինէ ինք մինչև 20 հոգի. հարկաւոր էր ինձ հրապարակաւ չնորհակալութիւն ասելու իմ մեծարող կղբարցը. ասուեցաւ հացի վերայ մի բաւական համառօտ, շատ ազդու ճառ, որոյ օրինակը կ'ուղարկեմ Զեզ յետոյ:

Իմ իդէան և զաղափարը այն դպրոցի մասին, որ յղացած էր իմ մէջ Մոսկուայում արդէն, ուր հայկական օրիորդները Թիֆլիսի պիտի ստանացին դաստիարակութիւն և կրթութիւն, լինելու ժամանակով արժանաւոր մայրեր նոր հայկական սերունդին, այդ իդէան և զաղափարը ձգել եմ արդէն կարասի մէջ, որ խմորուի, եռ դայ, պարզի և ապա քաղցր զինի դրյանայ: Մի քանի իշխանաւոր խե-

լացի մարդիկ յանձն առան իրրե հոգարաքուք ներգործել այս տեղ, պատրաստել գործի ապագան և յետոյ տեղեկութիւն տալ ինձ Մոսկվայում, որ պրոգրամման զրուէր և խորհրդակցութեամբ իմ բարեկամների առաջարկուէր տէրութեան առ ի հաստատութիւնը եթէ այս խորհուրդը պատկուեցաւ, այնուհետեւ կամէի ևս նախապատրիւ ընտրել Թիֆլիզը քան թէ Նախիջնանը. Թիֆլիզը ցուցանում է ինձ աւելի կենդանութիւն, ժողովուրդը աշխոյժ է, այդ տեղ կան պատուական երիտասարդը, պակաս չեն և հայրենասէր անձինք, ունեցողք ազդեցութիւն և կշիռ թէ տէրութեան և թէ ժողովրդի առաջնու Թիֆլիզը. համեմատելով Նախիջնանի հետ, մի հոյակապ քաղաք է, բազմամարդ և բազմազործ, այն և բազմամբոխ. ինչ ժողովուրդ կամիս, կարող ես գտանել այս տեղ, մի խայտաճամուկ տեսաբան ամենայն կերպ մարդերի և նիւթերի. Բնական պայմանքը աշխարհի, հողը, ջուրը, դալարութիւնը, առատութիւնը և լիութիւնը—մինչ բոլոր Նախիջնանը մեռանում է չորութեան և ցամաքութեան մէջ—վերջապէս այն աղնիւ առարկաքը իմ սիրոյ և քնքշութեան, իմ եղբայրը և հարսը, իմ ազգագանքը, իմ հոգով չափ սիրած մօտաւոր բարեկամքը—այս բոլորս տալիս է Թիֆլիզին մի կախարդաբար քարշող զօրութիւն, մի զօրութիւն, որ իմ սիրած կապում է և կաշկանդում է նորա հետ. Գուցէ սխալվում եմ ես, Թիֆլիզը անարժան է իմ սիրոյն և մարդիկ ոչ այնքան սիրարժան, ինչպէս երեսում է ինձ. ուրեմն հարկաւոր էր մեզ և այս տեղ զգոյշու արթուն լինել և ոչ իսկոյն տեղի տալ առաջին քաղցը տպաւորութիւններին. Ես հակամիտուած եմ, այնուամենայնիւ մտածել, թէ իմ գործակատարութիւնը Թիֆլիզի մէջ ունենալով մի քանի դժուարութիւնք, ունէր դորա փոխարէն և յարմարութիւնք շատ, որովհետեւ ցիվիլիզացիան այս տեղ բաւական յառաջադէմ է. Այս խնդրի վերայ շատ ուրախ կը լինեմ կշռադատել Զեր հետ Մոսկուայում, հանդարտ ժամերի մէջ.

Վաղուց չունեմ Զեղանից նամակ. ինչպէս է այժմ իմ անքաղդ ամուսնակցի որպիսութիւնը. արդեօք երեսում է յառաջադիմութիւն դէպի լաւը, նորա առողջութեան մէջ. ոհ կին, կին ի ընէ անտի կամ թէ կենսական հանգամանքով իւր ծնողական տան մէջ արդէն տրամադրուած և հակամիտուած դէպ ի մելանխոլիա, միշտ տխուր և տրտում, միշտ կենսատեաց և թշնամի վայելչութեան, միշտ տենդի և ջերմութեան մէջ, միշտ անհանգիստ և փրփրուն—այսպիսի անձը, զարմացք չէ, որ չկարողացաւ ոչ իւր անձը և ոչ իւր ամուսնակիցը բազդաւոր առնել. Ամենայն ցաւակցութեան արժանի կին, որովհետեւ տանջանք իւր և աշխարհի համար. Իմ ազնիւ եղբայր, չդիտեմ, ինչ խօսքերով բացայայտեմ Քեզ իմ չնորդակալութիւնը այն քնքուչ բարեկամական հոգատարութեան փո-

խարէն, որ Դու ցուցանում ես իմ անբաղդ ամուսնակցին. այդ մի յաւիտենական պարտք է իմ վերայ, և դորան վճարել կարելի չէ երկրաւոր հատուցմամբ, ուրեմն թեղ հատուցանեմ Քեզ այն ամենաթանգ բանով, որ ես ունիմ, այսինքն իմ անկեղծ սիրով և անփոփոխ առ Քեզ յարգութեամբ:

Իմ Թիֆլիզեան բարեկամների մէջ, որ և Քեզ ծանօթ, շատ անգամ յիշուում է Քո նազելի անունը, ինչ որ ուրիշները զգում են Քո յիշատակը բերան առնլով, չգիտեմ. բայց ես ստիպվում եմ այդ բոպէներում թաքուցանել երեսս, որից թորթորում էին քաղցր սիրոյ քաղցր արտասուք, հասկանալի միայն իմ պէս սիրող սրտին, և ոչ ամենեցուն: Ո՞հ, և այս բառերս գրվում են այս տեղ ոչ առանց խորին, սրտի, շարժողութիւնների. Դու կարող ես նկարագրել մտքով, այժ սրտով իսկ, որովհետեւ սիրում ես և սիրողը միայն կարող է հասկանալ սիրողին, և այսպէս չափելով ու կշռելով կարող է իւր յատուկ փորձով ճանաչել իւր սիրած բարեկամի սիրու:

Ի՞մ ազնիւ եղբայր,

Քո երախտապարտ, միշտ սիրող եղբայր

Ս. Նազարեանց

Այսօր էգուց կերթամ Թիֆլիզից դէպ ի Երեան, այն տեղից Բաքուի վերայով կը վերադառնամ տուն—կարծենմ օգոստ. վերջին. Քո նամակդ կարող ես նոյն հասցէով ժամանեցուցանել Թիֆլիս, ուր պատուէր եմ տուած, որ Զեր թուղթքը հասուցանեն ինձ Դարա-Հիշակ:

Ս. Նազարեան.

11.

Իմ ամենագնիւ Սիրելի¹⁾,

Ամենայն սրտից ողջուննելով Քեզ և կամենալով շուտով գրել Քեզ մի առանձին նամակ, իբրև բարեկամական հաշիւ և համար իմ Թիֆլիզեան կեցութեան մասին, այժմ խնդրում եմ Քեզանից այս գերմանական նամակս հասուցանել մեր միրիդրիկոսին²⁾. որովհետեւ այդպէս է ցանկացել դա, այսինքն որ Զեր հասցէով գրեմ նորան:

1) Այս նամակում նշանակւած չեն ոչ զրութեան տեղո, ոչ էլ ամիսն ու տարին. բայց Փանեանցը վերջում նշակալել է նրա ստացման օրը՝ 5 օդոստ. 1866 թ., որից երեւում է, որ այս նամակը գրւած պիտի լինի Թիֆլիզից, 1866 թի յուլիսի վերջերին: Յ. Տէր Յակոբեան.

2) Նազարեանի որդին է. Յ. Տէր Յակ.

Չեր վերջին սիրալից նամակը իսկոյն ստացայ ակ. Ռոկանեառնից Թիֆլիզում և շատ ու շատ չնորհակալ եմ Չեր քաղցր բարեկամական հաղորդակցութեան համար: Ռուբեն մինչև իմ մանրամասն նամակս առ քեզ Թիֆլիզից, ողջ եղիր ամենայն բարեմասնութեամբ:

Քեզ առ ի արտէ յարգող ու սիրող եղբայր
Ս. Նազարեանց.

Շխնանցը տեղս էր և եկած էր ինձ տեսութիւն:

12.

Դարաչիչակ. 4-ին օգոստ. 1866.
Իմ աղնիւ սիրելի,

Ահա չորրորդ օրն է, որ այս տեղ եմ. այս բապէիս իջևանուած մի մալականի կեղառոտ գիւղի մէջ—ըստ որում Դարաչիչակ ասած տեղը մի մալականի գիւղ է—վոխանակ հանգստանալու տօթից և մի քանի քաղաքավարական այցելութիւններից այս տեղի արքունի պաշտօնաւորներին որ իւրեանց կառավարութիւնը երևանից փոխաղբել են այս տեղ, ջերմութեան պատճառով, կամիմ մի երկու խօսք խօսել Քո հետ իմ հեռաւորութեան տեղից:

Դարաչիչակը վատ տեղ չէ. զա մի ձոր է բաւական չափաւոր բարձրութեամբ սարերի մէջ 40 հեռաւորութեամբ երևանից. բայց Ծաղկաձոր, ինչպէս կամի ասել տաճկական ձայնը Դարաչիչակ, ես չեմ տեսանում այս տեղ գոնեայ այս բոպէիս Ցերեկով անտանելի ջերմ է այս տեղ. երեկոները շատ գեղեցիկ. աղբիւրները առատ և սառն. շրջակայքը արենելեան և հարաւային կողմից ցուցանում են բաւական ընդարձակ տեսարանք, արենելեան կողմում անաղին սառեր, որոց քամակում մառախուղի մէջ ազօտապէս, կիսերև գուրա է բարձրանում մեր նույիրական Արարատը Մի առանձին հաճութեան նիւթ ես չունիմ այս տեղ, որովհետեւ կեցութիւնս ամեննեին անյարմար, կեղտ և ապականութիւն և մալականի աղքատիկ տընտեսութիւն. մերայինք բնակում են մի փոքր աւելի յարմար քան թէ ես. ինձ պակաս է մինչև անգամ մի գրասեղան, և այս խօսքերս գրում եմ Քեզ իրեւ տաճիկ մարդ ծնկիս վերայ. յաւելացրեւ և այն ահազին բազմութիւնը ճանձերի, որ ամենայն բոպէ խածուտում են ինձ և դժուարացնում են իմ գործաւ Այս տեղ կան երեք հին հոյակապ եկեղեցիք, մինը շէն, իսկ միւսները աւերակ, որոց ձեզ նկարել է մեր Սաշինկան, մեր մանուկ ճարտարապետը: Այս գիւղը մի ժամանակ պիտի ունեցած լինի մի բաւական բազմաթիւ ժողովուրդ, որ ապացուցանում են ամենայն տեղ ցըուած գերեզ-

մաններ, մինչև նոյն իսկ փողոցի մէջ։ Մերայինքը —ըստ մեծի մասին կանայք, գտայ ես ոզդ և առողջ, դոցա մէջ և մի տեսդու մանուկ, որ վտանգի մէջ չէ։ Յուլիանէն մայրացել է մի արու զաւակի օրհնութեամբ, և մահճի մէջ է այս բոպէիս Մեր փեսայի եղբայրը տեղա չէ։ բայց տեղեկութիւն տուեցին նորան, որ ես եկած էի։ իմ հետ միասին Թիֆլիսից եկած էր այս տեղ եղբայրս, և երեկ գնաց նա ձիով, որ ուզարկել էին նորան իւր թուրք բարեկամները, դէպ ի սարերը։ շատ զգում եմ նորա պակասութիւնը, մի շատ սիրելի անձն, որ եղբայր ու հայր միանգամայն եղաւ իմ հետ։ հարստութիւն չունի նա, բայց ապրում է իւր բարի թէե ժամանական վաստակով և միշտ հեռի իւր ընտանիքից, որին ես ամեննեին անհաւան եմ Բոլոր այցելուներից, որ ես արած եմ այս տեղ, ամենալաւը և արժանին է տունը զինուորական զուրեննատոր Աստաֆենվի, որոյ մօտ այսօր ճաշելու հրաւիրուած եմ. դորա կինը գերմանացի է և զերմանական լեզուն և լիտերատուրան սիրելի այդ տան մէջ։

Ես չեմ մտածում երկար մնալ Դառաչիչակում, որովհետեւ դա չունի իմ համար ոչինչ բարոյական վայելչութիւն։ Երեանի մարդիկ այնպէս հեռի են Թիֆլիսիներից, որչափ երկիրը երկնքից։ Ես մտածում եմ դարձեալ Թիֆլիսի վերայով վերադառնալ առ Զեզ։ և ճանապարհա առնլու էք դէպ ի Ռոստով։ այդպէս են խորհուրդ տալիս իմ բարեկամքը, տեղուա գուրեննատոր Աստաֆինվը, և ինձ շատ քաղցր է դարձեալ գրեկել իմ սիրելիքը Թիֆլիսի մէջ։ Ուրախ կը լինէի, եթէ յաջողէր ինձ ամսուս 8-ին դուրս գալ այս տեղից դէպ ի եջմիածին, և այն տեղից շուտով վերադառնալ դէպ ի Ռոստով։ այսպէս յուսալի էր ինձ օգոստոսի վերջում դարձեալ տեսանել Զեզ, իմ հոգուս հատորը, զկնի մի ճանապարհորդութեան որ արդարե եղած չէ երազի մէջ, այլ լիակատար արթնութեան, տեսանելով և լսելով և նկատելով։

Երկար ժամանակ է, որ ես Զեր նամակներից զուրկ եմ, գոնեա դոքա չեն հասած ինձ, և Դուք զիտէք, որ այս ասենամեծ զրկանքն է իմ համար։ Արդեօք ինչպէս է իմ ամուսնակցի զրութիւնը։ Կայ յառաջադիմութիւն դէպ ի լաւը։ Զեր վերջին նամակներից որ էին 28-ից և 30-ից յունիսի տեղեկացայ, որ հիւանդը տարուել է ազարակ (Բօղօրօդսկ) ազատ և առողջ ող վայելելու, որ զիսաւոր բանն է։ ուր և բժիշկը լինելու է նորան այցելու և կարգադրելու նորակեանքի բոլոր եղանակը։ Տեղեկացայ նոյնպէս, որ իմ ծանօթ Բէննէ կինը իրրի հոգաբարձու սպասաւոր հիւանդին վեր է առնուած, և թէ դորա մեղմանոզի և հեզ խնամատարութիւնը և ներկայութիւնը օգտաւէտ ներգործում է հիւանդի վերայ Աստուած տայ, որ շուտով փարատուի այդ ցաւը, որոյ համբաւը, ուզիզն ասեմ Զեզ, թունաւորեց իմ բոլոր ուրախութիւնքս։ 34 տարուց յետոյ մի անգամ

ոտք տանից դուրս դնել, և այդպիսի տրտում համբաւով տրտմել և վշտանալ իւր ճանապարհորդութեան մէջ, մի սարսափելի բան է: Մի խօսքով, Աստուած բոլոր դառն հարուածները հաւաքել է իմ զլիսի վերայ, տրտմութիւն և ցաւ գերդաստանից դուրս իմ կեանքս սեացաւ և խաւարուեցաւ մի անդամ կնոջ ձեռքում, անհնազանդ, լիրը և անբարոյական զաւակների ծանրութեամբ. Բայց ինչ որ պատահել է, այդ վաղուց գուշակում էր իմ հոգին, ներգործող պատճառներից եղբակացնելով գալոց և ապադայ հետեանքը: Արդարե եղած են բաղում և բազում մարմնաւոր պատճառներ մելանխոլիայի իմ ամուսնակցի մէջ նորանոյն իսկ կուսական կեանքի հանդամանքում. Նա եղած է մելանխոլիկ և ատեցող ամենայն կենսական վայելչութեան և ուրախութեան իւր բոլոր ամուսնակցութեան մէջ, բայց և բարոյական պատճառները կարելի չէ անտես առնել: Մի կեանք վէճ ու կռուի և անխաղաղութեան մէջ անցուցած, մի կեանք լի ատելութեամբ դէպի տղամարդ ամուսինը, յիմար պատուասիրութիւն և իշխանասիրութիւն, սովորական խարեւայութիւն ընտանիքի մէջ և դորա հետեանքը մի սանձարձակ վայրենարարոյութիւն զաւակների մէջ, միմեանց միս ուտել երեխաների մէջ, որովհետեւ մայրը մինը քնքեցնում է և փայփայում է, իսկ միւսին անիրաւութիւն է առնում—դորա վերայ և այլ զրկանք ու արտասուզ—ուղիղն ասեմ, այդպիսի հանդամանքի մէջ պիտի վերջապէս դուրս երեկը մի առանձին, արտականոն դիպուած, և դա արդէն զրուած է մեր առաջեւ ես չեմ իմ գերդաստանի անբաղդութեան պատճառը, այլ իմ, իւր անձը չհասկացող և իմ հետ խելագարութեամբ վարուող ամուսնակցու եւ Քեզ ամեննեին քաջայայտ է, որ ես ամեննեին անբաղդ տղամարդս երկար ու ձիգ տարիներ ահա մի բոպէ խաղաղութիւն տեսած չեմ տանս մէջ, ես կերել եմ թոյն և մահ այդ բոլոր միջոցին: Աստուած դէպի ի բարին առաջնորդէ Քեզ և ինձ:

Եթէ այսուհետեւ հաճոյ կը լինէր Քեզ զրել ինձ, ապա կը խնդրեմ, որ նամակդ նոյն հասցէով գրես, որպիսի հասցէով մինչեւ այժմ զրած ես:

Ի՞նչպէս է Օլինկայի, իմ ազնիւ դստրիկի առողջութիւնը. ո՞ն իմ սիրոյ քաղցրիկ պտուղները—այդպէս անբաղդացած դոքա... բայց պիտոյ է հոգեւորուել, հոգի ստանալ, հաւաքել աւերակները և վերանորոգել դորանց, որչափ տակաւին կարելի էր:

Ամենայն բարեմաղթութեամբ

Գո Քեզ միշտ սիրող

Ս. Նազարեանց

13.

Աղնիւ բարեկամ իմ
Մելքոն Գասպարեան,

Սիրելի ամուսինն իմ էմմա Ֆէօդորովնա երեկ 11 ժամուն երեկոյի աւարտեց իւր երկրաւոր կեանքի ասպարէզը, ննջելով ի Տէր Ամանաւորելով Զեղ այս տխուր տեղեկութիւնը, խնդրեմ և յուսամ, որ Դուք շուտով կը զաք իմ մօտ խորհրդակցելու թաղման հանգիսի մասին, և եղբայրաբար հոգալու, ինչ որ ի միասին արժան կը տեսանէինք: Սիրտս շատ ախուր է, ականատես վկայ լինելով ազնիւ հանգուցելու անպատմելի չարչարանքին և նորա կատարմանը: Խաղաղութիւն և սէր նորա սուրբ յիշատակին:

Զեր եղբայրապատիւ բարեկամութեան մխիթարութեանը կարուց,

Անհամբերութեամբ սպասում եմ Զեր այցելութեանը
Զեղ յարգող
Ա. Նազարեանց.

20-ին նոյեմբերի 67.

Մոսկուաւ

14.

Քերչ, 1869, օգոստ. 14.

Իմ ազնիւ եղբայրապատիւ բարեկամ,

Անա 12 օր է, որ մենք ճրաժարուեցանք միմնանցից, և Զեղ անտարակոյս քաղցր կը լինէր տեղեկանալ, թէ ինչպիսի ճանապարհորդութեամբ հասած ենք տեղս: Ես զարմանումնեմ, որ այս բուպէիս բանտարկուած Քերչի հիւրանոցում, զկնի փռքը ի շատէ հանդըստասութեան, գրումնեմ Զեղ մի քանի խօսք: Բայց սորա պատճառն է, որ կովկասեան նաւարկութիւնը շաբաթի մէջ երկու անգամ միայն կատարումէ իւր քնթաքը դէպ ի Պօտի. մեք երեկեան օրը հասանք տեղս և պիտի մնամք այս տեղ մինչև շաբաթ, օ ժամը երեկոյի:

Մոսկուայից մինչև Նիժնիյ ճանապարհորդեցանք ողջութեամբ, բայց հասած եիմնիյ, պիտոյ էր մեղ իսկոյն, առանց շնչառութեան, նաւամուտ լինել, որովհետեւ նաւը անյապաղ կամէր շարժուիլ իւր կայարանից: Շատ շնորհակալ եմ մեր պ. Թութունեանից, նա ծտի պէս այս կողմ ու այն կողմ թոչելով, մեր ծանրութիւնքը կշռել տալով, ճանապարհորդութեան տոմսակներ առնլով, ճանապարհ ձգեց

մինչև յողենաւը։ Այս տեղ բաւական բարւոք անդուցինք ժամանակը։ Մեք թէպէտ առած էինք շարդի տոմսակներ, բայց գերմանացի կապիտանի շնորհիւ իմ ամուսինս և Օլինկան միւս առաւտուն տեղափոխուեցան դէպի ի 1 կարդի կայիւտը, որ շատ յարմար և մաքուր էր և կարող եմ ասել, ամենապատուականը մեր բոլոր մինչև այժմ տեսած նախակարգ կայիւտներից, սկսեալ Դօնի նաւերից մինչև Սղովիան և Սեաւ ծովի նաւերի կայիւտները։ Առ հասարակ պիտոյ է ասել, որ Վոլդայի նաւային ճանապարհորդութիւնը շատ զուարձալի և զեղեցիկ ու յարմար է։ կերակուրը ոչ այնքան լաւ, որպէս Դօնի վերայ, բայց ամենից առաւել պատուական և առատ են կերակուրքը Սղովիան և Սեաւ ծովի վերայ, որոց վճարը միաւորած է ճանապարհորդութեան արծաթի հետ։

Երբ որ Մոսկուայում էի, մտածում էի ես, թէ աւելի յարմարաւոր կը լինէր ինձ Ռոստովից պոստայի դիլիժանսով գնալ դէպի թիգլիս, կարծելով որ այսպէս ունէի աւելի կարծ ճանապարհով տեղ հասանել, բայց յետոյ տեղեկացայ, որ այս ճանապարհորդութիւնը աւելի թանգ պիտի նստի։ Եւ այլ կողմից յորդորանք եղեայսպէս ընթանալու, ինչպէս ընթացած եմ, բայց ցաւում եմ միայն, որ փոխանակ նախիջեանում, մեր բարեկամների մէջ 3—4 օր մնալու, սափառուած եմ այդ ժամանակը անցուցանել մի ամենեին անծանօթ քաղաքում, Քերչում, և հիւրանոցում։ Եթէ պիտոյ էր ինձ փոքր ի շատէ տեղեկութիւն տալ Զեղ այս հարաւային քաղաքների մասին, Ռոստովի, Տագանրոդի և Քերչի, ապա ասելու էի Զեղ, որ դոքա աւագի, փոչու և ապականութեան մէջ խորասոյզ եղած, կորած քաղաքներ են, և մայրաքաղաքից եկած ճանապարհորդք կարող չէին հաւանիլ դոցա։ Տագանրօզում և Քերչում կան այս փոքր ի շատէ բարեչէն տուներ և խանութներ, խտական ճարտարապետութեամբ, բայց աւերակ չէնքերը աւելի են, քան թէ չինածքը։ Փողոցներ և խանութներ Քերչում ըստ մեծի մասին լի են ապականութեամբ և դարձանութեամբ։ Մրգեղէն, տանձ, խնձոր, սեխ, ձմերուկ, հաղարաւոր այլ ուտելիք թափած են հրապարակում, և վաճառվում են ամենաշնչին դնով։ ձմերուկը մանաւանդ շատ, բաւական ընտիր և առաւել պատուական քան թէ Ասիայինը։ Դօնի ձմերուկը իւր շաքարային քաղցրութեամբ զերազանց է կամիշեանից։ Բայց մի բան, որ առաւել հարկաւորն է կեանքին, շատ անպիտան է, այսինքն բամելի ջուրը մանաւանդ Տագանրօզում և Քերչում ես առաւել։ Քերչում մին տեսակ ծառ կայ, դա է ակացիա, բաւական հաօտ բուներով, որ ծառի նման դէպի ի վեր աճելով հասանում է բաւական երենլի բարձրութեան, և առները և փողոցները շատ տեղ իւրեանց առաջե և երկու կողմերում ունեն տնկած այդպիսի ծառեր, որ տալիս են փոքր ի շատէ հովանաւորութիւն և կաղմում են բուլվարի պէս բան։

Ծովային ճանապարհորդութիւնը թէև բազում մասամբ աւելի հանգիստ լինելով, սակայն ներգործում է իմ վերայ բաւական վատ, ախորժակս արդէն կորուսած եմ, բերանս միշտ դառն է, իմ ամուսնոյ սիրտը զրեթէ միշտ խառնում է. Աաշինկան և Օլինկան միայն աղատ են այսպիսի տառապանքից:

Դեռ ևս բաւական շատ ճանապարհ մնում է մեզ հատանելու, Աստուած տայ, որ շուտով հասանէինք Քութայիս, այնուհետեւ հեշտանալու էր ճանապարհորդութիւնը:

Ես արդէն փոքր ի շատէ, թէպէտ բաւական կցկտուր կերպով պատմեցի Զեղ մեր որպիսութիւնը, և կը ցանկանայի օր մի յառաջ լսել Զեր պատուական առողջութեան լուրը. բայց ցաւում եմ, որ Դուք կարող էիք միայն զրել ինձ դէպ ի Թիֆլիզ, Քաթանեանի հասցէով: Այնու ամենայնիւ շատ ու շատ ուրախ կը լինէի ստանալ Զեր թուղթը, հասած Թիֆլիզ:

Իմ բոլոր նեղութիւնների մէջ ճանձրալի ճանապարհիս վերայ իրրի մի քաղցր լուսատու, միսիթարիչ աստղ ընթացակից է ինձ Զեր սիրոյ և բարեկամութեան յիշատակը, և հաւաստի եմ, որ դա տակաւին շատ օրեր պիտի լուսաւորէ իմ կեանքի շաւիղը, քաղցրացնէ իմ սիրտը, տայ ինձ ոյժ ու զօրութիւն արիական հոգով լցուցանելու այն օրավաստակը, որ մնում է տակաւին լցուցանելու իմ ծերութեան օրերին:

Իմայինքը սիրով ու կարօտով ողջունում են Զեղ, խնդրելով Զեղ աստուածուստ ամենայն հոգեսոր և մարմնաւոր բարեմասնութիւնը:

Համբուրելով և զրկախառնելով Զեղ հոգով, այլ և խնդրելով մատուցանել մեր ամեննեցուն սիրալից ողջոյնը մեր սիրելի բարեկամիներին Մոսկուայում, Տէր Յարութիւն աւագ քահանայի ընտանիքին, պարոն Շահազիզին և ալ. Սահակեանին:

Մնամ

Զեր անձնանուէր յարդող եղբայր
Ս. Նազարեանց,

15.

Թիֆլիս, 29 օգոստ. 1869.

Աղնիւ, Հոգեհարազատ Բարեկամ,
Վերջ ի վերջոյ հասանք Թիֆլիս, և փառք Ամենակալին, ողջութեամբ, ամսոյս 23-ին, շարաթ օրում 12 ժամին առաւօտու Զկամիմ նկարազրել Զեղ այն տառապանքը և անհանգստութիւնք, որոց պիտոյ էր մեզ տանել, ճանապարհորդելով Քերչից մինչև ի-

թիֆլիս, թէ ծովով և թէ ցամաքով, սկսեալ վերջին, Օրպերի (Պարզ չէ գրուած, Յ. Տ. Յ.) անուն ծովային իջևանից և Քութայիսից մինչև Թիֆլիս:

Վատանգաւոր և ահաւոր մանաւանդ էր ուզեռութիւնը Քութայիսից մինչև Թիֆլիս, սարերի ոտքի մօտ ամենեին նեղ անցըերից, որոց միւս կողմում ամենայն բոսէ սպառնում էր մնզ վրժումն և կորուստ, կուր գետի ապառաժեայ ձորի մէջ Երկու սալլեր հակառակ կողմերից միւմեանց հանդիպելով, մեք վոստայի տարանտասով, իսկ միւսը եղներով լծած սայլով, ուղիղն ասեմ, սարսափի մէջ էի ընկնում. բայց թէ լծած եղները նրափիսի ընազդեցիկ ճարտարութեամբ շեղելով իւրեանց լուծը մեր մօտից, անդունդքի բերանով քերվում էին և անցնում էին, մի զարմանալի տեսարան էր: Իմ առաջին ճանապարհորդութեան միջոցին ես նկատած չէի այս անացուցիչ դժուարութիւնքը, որ այժմ զրեթէ մի նորառեսիլ բան էին ինձ: Փառք Աստուծոյ, մարդուս քարեղէն բնութիւնը կարող է ամենայն դժուարութիւնների և անախորժութիւնների համբերել և յաղթել: Իսկ ես այժմ նստած եմ եղրօս նորաշէն տանը, Հաւլաբարում, ուրախանում եմ, որ այդ ճանապարհային դժուարութիւնքը և անյարմարութիւնքը պատկանում են արդէն անցած զնացածին, և ես կարող եմ այժմ հոգու խաղաղութեամբ մտածել դոցա վերայ: Ի՞նչ անախորժ զգացողութիւնք սովոր են տիրել մի մարդու սրտի, որ եկած է մի նոր քաղաք, այստեղ մնալու տեսղապէս և ընտանիքով, ուրեմն և հոգալու իւր համար տեղի բնութեան և տնտեսութեան—այդ անախորժ զգացողութիւնքը կրկնապատիկ ծանրաբեռնում են ինձ այս բոպէիս Թիֆլիզում, ուր հանդիպում են ինձ մինձ դժուարութիւնք: Արդարեւ, նորաշէն քաղաքամասում կան շատ պատուական տուններ, բայց վարձու տալի բնակութիւնքը շատ անյարմար և կեղաստ բաներ են, մաքուր և յարմարաւոր բնակութիւնք—վորքիկ—երեք կամ չորս օրինաւոր սենեակք, միւնիւրը մութ և կեղաստ, շատ տեղ ներքնատուն չկայ ամառնային ժամանակի տնտեսութեան համար, վայտ գնելու տեղ ոչ այլ տեղերում, արտաքնոցք խողանոցք, բակերը անսալայատակ, լի աւերակներով: Հաւլաբարը, թէ ամենապատուական, առողջաւէտ մասը քաղաքի, թողած է ամենեին անշչէն ու անպատ, լի աղմով ու ապականութեամբ, անձրեի ժամանակում, զուրկ անցանելի ճանապարհներից—որովհեամ բոլորը փոսեր ու խանդակներ են, Աւերակ ու ամայի տեղեր շատ տեսայ քաղաքներում, որոց վերայից պիտոյ էր ինձ ճանապարհորդել, բայց Թիֆլիսի Հաւլաբարը և ինձ քաղաքամասը, ժողովրդի և կառավարութեան անհոգութեամբ մի գարշելի խառնիճաղանջ է ամենայն տեսակ անկարգութեան և ապականութեան և կեղաստ ու պատառուած մարդերի, մինչև որ մարդուս ուզեղը ցրվում է:

Նատ ուրախ եմ, որ կարող եմ Զեզ մի քանի խելացի խօսք պրել զինի այսպահն երկարաձիգ և տաղտկալի ճանապարհորդութեանս, արդէն փաքը ի շատէ հանգստացած, բայց թաքուցանել կարող չեմ, որ տակաւին մի տեսակ թմրութիւն տիրում է սրտիս, չունեմ զեռ ևս այն պայծառութիւնը հոգու, որում կարօտ էի, թէպէտ ուտելու և խմելու մէջ բաւական պարկեշտ ու չափաւոր եմ: Կարծեմ, դորա պատճառը պիտոյ էր խնդրել իմ այժմեան անկարգ տնական կեցութեան մէջ, որովհետեւ տակաւին դամ մի օրինաւոր քնով և հանգստութեամբ կաղղուրուած չեմ: Թէպէտ և եղբայրս ու հարսա ամենայն կարելի հոգաբարձութեամբ աշխատում են, հասուցանել մեզ ամենայն թեթեութիւն և յարմարութիւն, սակայն դեռ ևս անցանում է մեր կեանքը՝ ասես թէ փողոցի վերայ, ստիպողական հրապարակի մէջ: Աստուած տայ, որ շուտով հանգստանանք. մեր կապոյքը, առաջինքը և ֆօրտեպիանոն, հասած են տեղ. բայց տակաւին հաստատում օթեան չունենալով, կարելի չէ ընդունել զնոսաւ:

Չեր և մեր բոլոր բարեկամքը և ծանօթքը շատ հարց ու խնդիր արեցին Չեր առողջութեան ու կեանքի մասին, և ընդունելով իմ բերանից Չեր սիրոյ և բարեկամութեան ողջոյնքը, ուղարկում են Չեր նոյնպիսի սիրալից բարեկամական ողջոյնք:

Ներսիսեան դպրոցի հոգաբարձուքը տեսայ, նոյնպէս և նոցանախագահ աթոռակալ Մակարիոս արքեպիսկոպոսը, որ նոյնպէս մեծարեցին զիս իւրեանց վերստին այցելութեամբ: Կնեազ Բէհրուդեանը շատ խելացի և սիրելի անձն է. սրբազանն ևս հանդարտ և արժանաւոր մարդ, որում կարելի է հաճութեամբ ունկնդիր լինել: Արդէն երկու անգամ եղած եմ Ներսիսեան ուսումնարանում և գտայ դորա արտաքին կերպարանքը ամենայն մասամբ անարժան որպիսութեան մէջ. բոլորը կեղտ և ապականութիւն, մանաւանդ հնացէն մասն ուսումնարանի. մինչև խորհրդարանը ուր ժողովում են հոգաբարձուք, մի կեղտոտ սենեակ է, փոշոտ, տղմոտ, յատակը անսերկ և գետնի պէս: Սանդուղքը, որ վեր է տանում դէպ ի ուսումնարանը դարպասի կողմից—և ոչ թէ բաց փողոցից—մի այնպիսի բան է, որ կարելի էր համեմատել մի կարակի սանդուղքի հետ: Այս բոլոր ապականութիւնքը սրբելու և մաքրելու, կամ թէ ամենելին քանդելու և նորոգ շինելու և մարդագայելուչ կացուցանելու, պիտոյ է անհրաժեշտ մի համարձակ, զործունեայ, ճաշակագէտ և ճարտարապետական ձեռն, մի ձեռն, Փանեանցի ձեռի նման: բայց այդ ձեռն, զուցէ թէ մի հատիկ է մեր Հայերի մէջ. որ տեղ կարելի էր այդ զատանել թիֆլիզնան թմրած և անհոգ մարդերի մէջ: Թէ Ներսիսեան դպրոցի ներքին վիճակը որպէս է, այդ դատել այս բոսլիս յանձնառու չեմ, որովհետեւ վերահասութիւն դործած չեմ տակաւին:

Մերայինք, Փառք Ամենակալին, առողջ ևն և շատ սիրով ող-
ջաւում են Ձեզ: Խնդրում եմ մատուցանել իմ ողջոյնքը մեր սիրելի
բարեկամներին, աւագերեց Տէր Յարութեանը և Սմբատ Շահազի-
դեանին, որոց անպատճառ կը գրեմ, երբ որ միայն ժամանակ
դատանեմ:

Հոգով գրկախառնելով Ձեղ
Ձեր Ս. Նազարյանց.

Իմ հասցէն. Եր Վայովութեանց Ստեփան Իսաևիչ Նազարյանց
Վայովութեանց Ստեփան Իսաևիչ Նազարյանց

Բա Տիֆլիս

На Авлабарի, у Покровскихъ казармъ, въ домѣ Мартироса
Назарյяնца.

16.

Թիֆլիս, 1869, սեպտ. 6-ին.

Ազնուամեծար բարեկամ

Մելքոն Գևառապետին.

Թէ հրալիսի խնդրութիւն պատրաստեց ինձ և իմ գերդաստա-
նին Ձեր պատուական նամակը անցեալ օգոստոսի 23 թուականից,
կարող չեմ ասել Ձեզ. այդ առաջին նամակն է, որ ես Ձեր կողմե-
րից ստացեալ եմ, և այդ այդպէս արժան էր, միտ դնելով մեր
չնայիսարհիկ բարեկամութեանը, որ հիմնած է միայն պարզ և սուրբ
սրտի անարատ ձկտողութեան, երկուստեք սիրոյ և յարգութեան,
և ոչ թէ նիւթական հիման վերայ:

Թէ որքան քաղցր և հոգէպարար բան է, այսպիսի հեռաւու-
րութեան մէջ մի մարդ ռւնենալ այս աշխարհումն, որ այդքան մօտ
էր իմ սրտին, որում այդքան մօտ էր և զգալի իմ բաղդաւորու-
թիւնը կամ անբաղդութիւնը, իմ ուրախութիւնը և տրտմութիւնը
—իմ ազնուամեծար բարեկամ, այդ մի երկնային պարգի է, մի
վերնական ուրախութեան նախաճաշակ է, որոյ վասն երկորինս
պարտական ենք վիճաք տալ Աստուծուն և միշտ գոհանալ նորանից
վասն նորա մեծ և գթառատ ողորմութեան առ մեզ: Ի՞նչ է ար-
ծաթն ու ոսկին այս աշխարհումն. արդարեւ մի լոկ հնար ապրուստի,
ուտելու խմելու, հագնելու և բնակելու. բայց վայ և աւազ մեզ,
եթէ միայն գորանով պիտի սահմանախակուէր մեր կեանքը այս
աշխարհումն, եթէ չկար մի մարդ, որ զարդարէր այդ կեանքը իւր
սիրով և բարեկամութեամբ: Եւ Դու լաւ գիտես, ինչպէս ես, որ
ոչ Դու և ոչ ես ստացուած չենք միմեանց համար արծաթի և ոսկու
գնով, այլ մի ամեննեին այլ, վերնական բանով, մի աննիւթ, ուղիղ
զգացողութեամբ սրտի, թէ ամենակիս բանը այս աշխարհումն

մարդս է, և մեր միակ երջանկութիւնը սիրել եւ յարգել մեր աղնիւ ընկերը—մի զգացողութիւն արդարեն, որոյ երկնային քաղցրութիւնը մարդերից չառներին ամեններն անձանօթ է, որովհետեւ, մի անպատճելի թշուառութեամբ, կուրացած և մոլորուած են իւրեանց անձնապաշտութեամբ, էղօյիսմով:

Ես դիտաւորութիւն չունեմ կրկնելու այն տեղեկութիւնքը, որ արդէն տուած եմ Զեղ իմ նամակների մէջ առ Զեղ Քերչից և Նորերումս, Առուկուայից, Յուսամ, որ մինչև այժմ ստացած լինիք այդ թուղթքը և իմացած լիովին մեր ուրախութիւնքը և տրամութիւնք այս երկար ու ձիգ, բազմափոփոխ ճանապարհորդութեան մէջ:

Ուղարկած բաների (չորս կապոցի) հաշիւը պարոն թութունեանցի ստացայ և չնորհակալ եմ:

Մեք իջնանած եմք Թիթիսում իմ եղրօր տանը և վայելում ենք նորա եղրայրսիրական ամենամասնեայ ինսամարկութիւնը: Վարձեալ եմք արդէն մեղ մի տուն բնակութեան, չատ գեղեցիկ և յարմարաւոր, միայն թէ և չափազանց թանգ. 800 մանէթով. որովհետեւ այս տեղ արժանաւոր տուն բնակութեան չկայ աւելի թեթե գնով. 600 մանէթանոց տուներ կատարեալ կեղտոտ և գարշելի ծակամուտք են, տանուտեարք ամենայն մարդկային բանականութիւն և պատկառանք վերայից հանած, պահանջում են և կամքն կեղեքել, որչափ միայն կարող էին: Եւ ինչ անտանելի պայմաններ — մի տարի յառաջ վճարել բոլոր տարեկան վարձու գումարը. Արի, զու տուն վարձիր այսպիսի տանուտեարցից, ոչ երկիւղ Աստուծուց, ոչ ամօթ մարդերից: Մեր տունը Սօլօլակումն, չատ յարմարադիր, պատկանում է Գրիգոր Շաղինեանին. որ մի պատուելի և բանական անձն է: Ունի մինչև 14 սենեակներ, որոց չատերը առանձին են գաւիթի վերայ և ես կարող եմ վարձու տալ և ստանալ դոնեայ 200 ման. ուրեմն իմ կեցութեան սիւծ բազմաթիւ սենեակները, որ կը լինին ի հարկէ առաւել պատուականքը, կարժեն ինձ 600 ման Բոլոր գաւիթը իւր շինուածներով և երկու գեղեցիկ ծառերով պատկանում է մեղ. յարմարութիւնք չատ ունի տունը և չատ փառաւոր են: Այսպէս վճռեցաւ այս խնդիրը ի պատիւ ինձ և իմ բարեկամներիս. կեղտի և ապականութեան մէջ թաղուել ի հարկէ կարող չեմ ես, թէ պէտ մի քանի մարդիկ այլապէս կամէին մտածել: Առանձին հոգաբարձութիւն և ջանադրութիւն այս գործի մէջ ցոյց տուեց մեր սիրելի Յակոբ Սերոբեանցը իւր ընկերներով. տուն չմնաց, որ չտեսանք, բայց բոլոր անպիտամ և անյարմար, բաց ի Շաղինովի տունից: Ամսուս 11-ին յոյս ունեմք լինել մեր յատուկ օթեանում և բանալ մեր կալոցները:

Ամսուս 4-ին առանձին ժողով հոգաբարձուների եղաւ և զիս

հրաւիրեցին յանդիման լինել այն տեղու Ատենապետ Մակար արք-
եպիսկոպոսը ընդունեց զիս հրապարակական ողջունով, ես համա-
ռա պատասխանեցի նորա ողջունին, իսկ յետոյ առացի մի այլ ճառ
առ բազմականքը, հոգաբարձուքը, որ շուտով կը տպուի Մնդուի
մէջ, թէ որպիսի տպաւորութիւն գործեց իմ խօսքը, այդ կարող
չեմ ասել Զեզ, որովհետեւ լսողքը հայերէն չգիտեն, և իմ կրակը և
հոգեւորութիւնը կարող էր միայն ըսրանիլ իմ խորհուրդներին ըն-
դունական սիրտեր։ Ճառից յետոյ Սրբազնը զիս մի առ մի ծանօ-
թացրեց բոլոր Հոգաբարձուներին, որից շատերը վազուց ծանօթ
էին ինձ, անձնական այցելութեամբ։ Հոգաբարձուքը տակաւին հե-
ռի են ինձանից, ինչու երեսում է, ճնշուած իմ կշռից և մնձու-
թիւնից. բայց յոյս ունեմ, որ շուտով մօտենանք միմեանց և լինի
հաւասարութիւն։

Սաշինկան կարգեցի այս տեղի մասնաւոր զիմնապիոնի մէջ,
որ պահում է իմ աշակերտ Մոնաստիրցովը, մի խելացի, պատուա-
կան անձն, կանդիֆտատ մաթեմատիկան գիտութիւնների։ Օլինկան
և կը կարգեմ մի ուսումնարանում։ Մեր առողջ եմք ընտանիքով
ամենեքեանն, իմ ամուսինս և երեխայք մեծ և յոյժ կարօւով ողջու-
նում են զԶեզ, այլ և մեր Մոսկուայում թողած սիրելիքը, յաճախ
և յաճախ յիշելով զԶեզ և միւսերը։ Խնդրեմ մեր ամենեցուն սի-
րոյ և յարգութեան ողջոյնքը մատուցանել Տէր Յարութիւն աւագ-
երիցու ընտանիքին, և մեր պատուական Շահազիզին։ Մեր հասցէն
առ ժամանակ։

Въ Тифлисѣ.

Въ домѣ Нерсесовскаго армянск. Духовнаго училища.

Ամեներին Զեր

Ս. Նազարեանց

17.

Երկրորդ նամակ Թիֆլիզից.

Թիֆլիզ, 7 հոկտեմբերի 1869.

Իմ եղբայրապատիւ բարեկամ,

Իմ նամակս առ Զեզ սեպտեմբերի առաջին թուականներից-
իրքե պատասխանի Զեր սիրելի նամակին 23-ից օգոստոսի, մինչեւ
այժմ անշուշտ պիտի հասած լինի Զեզ։ բայց մինչև այժմ ոչինչ
պատասխանի ստանալով Զեզանից, մեծ տարակուսանքի մէջ եմ։
Շատ ու շատ ցաւելու էի, եթէ կորած էր իմ նամակս—առաջինը
Թիֆլիզից—որովհետեւ գրած էր շատ խորին կերպով շարժուած
սրտից։ Իցէ թէ Դուք եկեղեցական շինութեամբը և գործերով

զբաղուած կարողացած չէք պատասխանել ինձ. երանի թէ չլինէր Զեր լոռութեանը մյլ պատճառ երկու շաբաթից յառաջ դրած եմ և մեր հասարակաց բարեկամ Տէր Յարութիւն աւագերեցուն:

Սերդարեւ այս բոպէիս նստած եմ վարձած օթևանիս մէջ, կարող եմ աւելի խաղաղութեամբ հոգու գրել Զեզ իմ որպիսութիւնս Թիֆլիզի մէջ: Նախ և յառաջ պիտոյ է ասել Զեզ, որ Թիֆլիզը աւելի թանգ քաղաք է, քան թէ նոյն իսկ Պետերբուրդ. իմ բնակութիւնս, որ միայն պատշաճաւոր է, առանց գերօրինակ փառահեղութեան, բայց բաւական ընդարձակ, արժէ 800 ման. տարեկան։ սորանից փոքրիկները, որ տեսած էի 4-ից մինչև 600 կամ շատ փոքրիկ էին, կամ թէ շատ կեղուս և ամենեին անյարմար. մի երկու սենեակ տանելի լաւ; միւսերը կատարեալ գետնափորք, մութ կամ թէ ապականութեան շրջակայքում գտանուած: Իմ բնակութեան դրութիւնը շատ գեղեցիկ է Սոլոլակում, նայում է հարակից զէպի սարերը և շատ մօտ քաղաքի կենտրոնին, որ թամամշովի կարաւանսարայի և թատրոնի տեղն է: Միայն թէ մի շատ անյարմար սովորութիւն կայ այս քաղաքում. ոչինչ տանուտէր չկամի այլապէս վարձու տալ իւր տունը, եթէ ոչ յառաջուց ստանալով բոլոր տարեկան վարձը, կամ գոնեայ տարեկան տնավարձի կէսը, սորանից կարող էք եղրակացուցանել. թէ որպիսի դժուարութեան մէջ պիտի լինէի, զոր օրինակ, իմ օթևանի համար միանգամ 800 կամ 400 մ. վճարել: Այս մի անսովոր բան է Մոսկուայից եկողների համար, որ, փառք Աստուծոյ, ծանօթ չեն այսպիսի քերթող և կեղերիչ մարդերի. ով է լսած այսպիսի ՇԱՅՈՎԵՐԵՎԵՐԸ Մոսկուայի մէջ, ուր ես 20 տարի ապրած եմ: Բնակութեան շատ անախորժելի պայմաններից յետոյ պիտոյ էր խօսել այս տեղի ծառաների մասին, որ նոյնպէս շատ թա՞րդ և անպիտան են: Մեր խոհակերը (կերակուր և փողը) որ նոյնպէս վաճառանոցից ուժելիք գնողն է, արժէ ինձ 10 ման, ամիսը. մեր աղախինը 6 ման. այսպէս 1000 ման, գնաց օթևանի և ծառաների համար: Իմ բոլոր ստացածս ուսումնարանից հասանում է միայն 2100 մանէթիւ եթէ չունենայի իմ պահպօնը, ապրել ես կարելի չէր այսպիսի կրակեղէն թանգութեան մէջ: Թիֆլիզը կիսով չափ եւրոպական ցիվլիզիայից չօշափուած քաղաք է, և այն արտաքուստ, մարդիկ ըստ մեծի մասին մնացած են ներքուստ մի և նոյն ասիական բարբարոսքը: Մօտաւորութիւն ոչ մինի հետ կարելի չէ ունենալ, բարեկամութիւն ես աւելի սակաւ, տռանձնութեան հոգին, ինչպէս Մոսկուայի, Նոր Նախիջևանի մէջ տեսած եմ ես, նոյնպէս տիրած է և Թիֆլիզի մէջ. ոչ մինը իւր ընկերի ցաւին և ուրախութեանը մասնակից չէ. ամեն մարդ ապրում է իւր համար առանձնապէս և մասնաւորապէս Գոնեայ ոչ մինից մինչև այժմ հրաւէր ստացած չեմ,

թէպէտ սոցա և նոցա տեսութիւն գնացած եմ: Հոգաբարձական ժողովի մէջ բաւական յարգելի է իմ ձայնը և անձը, և իմ առաջարկութիւնքը գտանում են ընդունելութիւն, որչափ դոքա պատկանում էին ուսումնարանի ներքին տնտեսութեանը. միայն թէ շատ ախորժելի չէ մեր հոգաբարձական ժողովների մէջ առաջակաց գտանուել, որովհետեւ ամենեքեան միասին առանց միմեանց խօսք լսելու և հասկանալու, ամեն մինը խօսում է ինչ որ կամի. և այսպէս գործերը և խնդիրքը փոխանակ պարզուելու և յառաջ գնալու, ևս առաւել պղտորվումնն, այնպէս որ փոխանակ մի ժողովի, հարկաւոր էր երկու, երեք ժողով առնել այս և այն խնդիրը վճռելու համար: Եւ հոգաբարձական ժողովի անդամքը այնպիսի ճիշտ ըմբռնողութիւն չունին իւրեանց պաշտօնի մասին: Մի անգամ գալիս են ժողով, հինգ անգամ ոչ, ժամանակ չունին, գործ պատահեցաւ են ելն: Այս անկարգութիւնը վերացնելու համար, ևս առաջարկեցի, որ ժողովի մէջ կանոնադրուի այսպիսի օրէնքը, թէ շորս անդամք հոգաբարձական ժողովի, նախագահ՝ աթոռակալի առաջիկայութեամբ իրաւունք ունեն խորհրդացել և վճռել յառաջեկած խնդիրքը, իսկ բացակայ գտանուածքը ունէին միայն յանձն առնուլ այդ վճիռքը:

Իմ առաջարկութեամբ ամսուս 12-ին հոգաբարձութիւնը կատարելու է հանդիսաւոր գործողութիւն (աՃԹԵ) ուր հրաւիրուելու են հասարակութեան փոխանորդքը լսելու ընկերութեան համարատուութիւնը դպրոցի արտաքին և ներքին տնտեսութեան մասին: Ես մտադիր եմ ճառ ասել: Հոգաբարձուքը հասկանում են, որ այսպիսի հանդիսաւոր գործողութիւնքը կարող էին միայն օգտակար լինել դպրոցի յառաջադիմութեանը, յարուցանելով ժողովրդի վըստահութիւնը և մասնակցութիւնը ուսումնարանի ցաւերին և կարիքներին, մանաւանդ որ ժողովուրդը տնտեսուելու էր, թէ զնայարդումնն, մեծարումնն, հրապարակաւ հաշիւ ու համար են տալիս նմա, թէ հրապէս էին հոգաբարձուք այն պարտականութիւնքը լցուցած, որ հասարակութիւնը նոցա վերայ գրած էր: Ես մտածումնեմ մի փոքրիկ բրաշիւրկա տպել ակտից յետոյ, ուր ամիովուելու էին իմ ճառս, հոգաբարձուների համարատուութիւնը, դպրոցի մէջ աւանդուած ուսմունքի պրօքրամման և մի քանի այլ փոքրիկ ուսումնական ճառեր, որ ըրօշիւրկան փոքր ինչ չափ և հասկա առնուր: Հոգաբարձուք զգումնն, որ մի շարժող և դրդող խթան յետուստ վարում է զնոսա և կամի յառաջ մզել, արիական մեռեալ գանդաղկոտութիւնը և անդործութիւնը, առես թէ, փոքր ինչ հոգի է ստացած և կամի դէպի ի յառաջ: Սկզբումը ես կամիմ մեզմով գնալ, հետ զնետէ կը սաստիացնեմ ընթացքս և կ'աշխատնմ և միւները առնուլ և տանել իմ հետ դէպի այն նպատակը, ուր մեզ ամսնե-

ցուն պարտ և արժան էք երթալ:

Խնդրեմ զրել ինձ յաճախ և յայտնել ինձ Զեր որպիսութիւնքը, ես կ'աշխատեմ ասպացուցանել, որ Թիֆլիսիան զանդաղեցուցիչ ատմօսֆերան որչափ և յաղթող լինէր, այնու ամենայնիւ հանդիպելու է իմ կողմից սամենապղու բնդդիմութեան։ Դուք Մուկուայի աւելի պազ եղանակի մէջ և աւելի բազգաւոր էք այդ մասին, ուրիմն և հարկէ գործ դնել այդ առաւելութիւնը։

Երեխայքը առողջ են և ողջունում են Զեզ. Սաշինկան յաճախում է այս տեղի մասնաւոր զիմնազիսնը, որ պահում են իմ աշակերտը Մոնաստիրցեվը և Տէր Յակոբեանցը, Ես ուսուցանում եմ այդ տեղ լատիներէն և հայերէն 5-րդ կլասումը, իրրե վճար Սաշինկայի համար, Օլինկան տակաւին տանն է և պարապում է իմ մօտ։ Կամենք շուտով հոգալ նորա համար երաժշտութեան վարժապետ Մի շատ անախորժելի բան, այն բենսերից որ Դու ուղարկեցիր իմ համար Տուտունովի ձևամբ, մինչև օրս հասած են միայն երկու արկղը, և դոցանից մինը անձրեփ տակ բնկած, և թացութենից բորբոսած էին թղթեղէն և կտաւեղէն բաներ, որ չեն թանգագին, բայց թէ այն միւս երկու արկղները, որոնց մէջ կան թանգագին հոլլանդիան կտաւիք, Երբ տեղ կը հասանեն և ինչ վիճակում, անյայտ տարակուածական է, իմ ուզարկած բենսերը ամեն ողջ անարատ հասած են այս տեղ, զրեանքը և պիանոն։ Իմ ամուսինը շատ սիրով և մեծարանքով ողջունում է զԶեզ, Զեր ամենայն բարեմասնութեան, իսկ ես հոգւով զրկախառնելով զԶեզ մնում եմ։

Զեզ միշտ սիրով և յարգող
Ս. Նազարեանց

Իմ հասցէս.

Въ Тифлисѣ.

На углу Сергиевской и Садовой улицы, въ домѣ Григорья Шадивова.

18.

Թիֆլիս, 12 հուն. 1869.

Իմ ազնիւ, ամենասիրելի բարեկամ,

Ես զրած եմ Զեզ իմ առաջին թուղթը Թիֆլիսից, անցեալ սեպտեմբերի առաջին օրերից, որոյ պատասխանը մինչև օրս ստացած չեմ։ Ես զրեցի Զեզ երկրորդ նամակը այս հոկտեմբերի 7-ից, որ մինչև այժմ հազիւ թէ կարող էր Զեզ հասած լինել. ուրեմն սորա պատասխանը և պահանջել կարող չեմ։ Ես այս բողէիս մեծ

տարբակուսանքի և տանջողական երկմտութեան (մէջ) եմ Չեր առողջութեան մասին, և օր չէ անցանում, որ չլիշնք Չեր քաղցր անունը մեր ընտանիքի մէջ:

Ես արդէն փոքր ի շատէ տեղեկութիւն տուած եմ Չեղ իմ կեցութեան մասին Թիֆլիզում, և այժմ չունիմ դիտաւորութիւն երկար ու ձիգ խօսակցութեամբ այդ նիւթի վերայ ձանձրաբացանել Չեր ուշակըութիւնը:

Մատուցանողը նամակիս է Արսեն Տէր Պետրոսեան քուերորդին սրբազան Մակարիոս վիճակաւոր առաջնորդի տեղուս, որ եկած է Մոսկուա ուսումնասիրելու Ռուսաց լեզուն և ֆրանսիականը և այդ դիտաւորութեամբ մի քանի ժամանակ կամի մնալ Մոսկուայի մէջ: Յետոյ, ինչպէս լուսմ եմ դիտաւորութիւն ունի գնալ արևմտեան երոպա, Գերմանիա:

Որովհետեւ այդ Արսեն Տէր Պետրոսեան օտար մարդ է Մոսկուայում, առաջին անգամ եկաւորուած տեղոյ, վասն որոյ կամիմ յանձնել զգա Չեր մարդասիրական խնամարկութեանը, խնդրելով Չեղանից օգնական լինել դմա Չեր խորհրդակցութեամբ և հոգաբարձութեամբ, մեր հասարակաց բարեկամ Տէր Յարութիւն աւագ քահանայի հետ միասին, որ դա գտանէ իւր համար թէ բնակութիւն և թէ ուսուցիչ ուուս և ֆրանսիական լեզուների Նիւթական կարօտութիւն չունի դա. այդ մասին հոգաբարձութիւն է գործում նորա հարուստ քեռին, սրբազան Մակարիոսը Աւրեմն Չեր հոգաբարձութիւնը լինելու էր մի բարոյական աշխատութիւն, որ իմ աջուում նոյնպէս մի մեծակիու բան է և արժանի ամենայն չորհակալութեան թէ իմ և թէ Սրբազանի կողմից: Ես յուսով եմ, որ Դուք կ'ընդունէք այդ պատանին ամենայն բարեկամասիրութեամբ և ձեռնտու կը լինէք նմա հոգալու այդ իւր ուսումնական կարիքը և դոցա պատշաճաւոր հնարները: Մի հեղ և պատուական պատանի է դա, որչափ ես ճանաչում եմ զգա, և որովհետեւ կամի ուսանել և կատարելագործել իւր անձը, ամենայն բարեմիտ, ուրեմն և Չեր և իմ բարոյական պարտականութիւնն է օգնական և պիտանի գտանուիլ դմա: Ես այս մասին զրելու եմ և առ մեր հասարակաց բարեկամ հայր Տէր Յարութիւն աւագերեցը, որոյ հետ կարող էք պարտ ու պատշաճ էր, խորհրդակցիլ այս պատանու օդտի մասին:

Մեր ընտանիքը առողջ են և ուղարկումնեն Չեղ քաղցւմ կարօտով ողջոյններ: Մեր զալուսաը Մոսկուայից Թիֆլիս այնպէս նորէ, և այն յիշատակները, որ մեք բերած ենք այս տեղ, այնպէս քաղցր և դալար և ծաղկափթիթ, որ և յուսամ թէ այդպէս միշտ մնալու են, մինչև կարող եմ Չեղ հաւատացնել, որ մեք մարմնով միայն գտանմում ենք Թիֆլիզում, բայց հոգւով Մոսկուայումն ենք և Չեր հետ հաղորդակից: Միայն թէ ինդիր, զիս այսպէս առանց

պատասխանագրութեան չթողուլ և շտագել շուտով միսիթարել Զերքաղցը նամակով Զերք Զեզանից զրկուած և միշտ Զերք վերայ մտածող և հոգոի մէջ

Բարեկամ Ա. Նազարեանց

իմ հասցէս դարձեալ գրեմ Զեղ.

Въ Тифлисъ.

На углу Сергиевской и Садовой улицы, въ домѣ Григорья Шадинова.

19.

Թիֆլիս, 12 նոյեմբերի 1869.

Եղբայրապատիւ բարեկամ

Մելքոն Փանեանց.

Քո սիրելի նամակը, անցեալ ամսու 23.ից արձակած, անկորուստ հասած է ինձ. թէ որչափ ինդութիւն և հաճութիւն պատրաստեց դա ինձ, կարող չեմ Քեզ խօսքով նկարագրել, և շատ ուրախ եմ, այլ և Քեզ առ ի սրտէ չնորհակալ, որ խոստանումես ինձ այսուհետեւ գրել կանոնաւոր կերպով, հազորդակից մնալ ինձ սրտով և գրով, ուրախակից և տրտմակից լինել ինձ և զիս առնել Քեզ, որպէս օրէնք է ճշմարիտ բարեկամութեան մէջ:

Մեք բաժանուելով միմնանցից, արդարե հասած ենք մեծ զըրկանքի, որոց տանելու և համբերելու համար, պիտոյ է մի քաջ և վեհանձն մարդու հոգու բոլոր կարողութիւնը: Մեր բարեկամութեան նմանը և հաւասարը կամ շատ սակաւագիւտ, կամ թէ ամենին անդիւտ է մեր Հայերի մէջ. Դորա կապերը չեն հաստատուած դիպուածով, նիւթական ակնկալութեամբ, ոչինչ նիւթական իրով, այլ սիրով և յարգութեամբ առ միմնանս, առաքինութեան ապառաժեայ-պինդ հիմքի վերայ. որ պիտի տեին, թէն երկինք և երկիր անցանէին: Ես սիրեցի զբեզ և ոչ թէ զբոյդ, խօսեմ աստուածային Պաւլոսի հետ, և Դու զիս և ոչ զիմն: Յաւելացրու դորա վերայ մեր բարեկամութեան քսանամեայ հասակը, և այս բոլոր միջոցում միմեանց հետ կերած ազուհացը, միմնանց հետ արտասուած արտասուքը կեանքի տրտում և սասանեցուցիչ պատահարների վերայ, միմեանց հետ ուրախացած ուրախութիւնքը կեանքի լուսաւոր և պայծառ օրերում: Ո՞հ, Մելքոն եղբայր, եղբայր իմ Մելքոն, ես խոստովանում եմ և վկայում եմ, որ մի բոլոր յաւիտենականութիւն բաւական չէր, լցուցանելու, վճարելու Քեզ այս քաղցը անսահման պարտքը, որ պարտական եմ Քեզ, թէպէտ զիտեմ, որ Քո սէրը և բարեկամութիւնը անիս, ճշմարիտ սէրը առ հասարակ, չգիտէ այդ-

պիսի համար ու հաշիւ, այլ իւր երջանկութիւնը գտանում է միայն, սիրելով և զրկանք յանձն առնլով, իւր անձը ուրանալով:

Ես այժմ Թիֆլիզումն եմ. Դուք Մոսկուայում, այս տեղ և այդ տեղ կան միենայն հայրենակիցքը մեր. բայց ինչ որ ես ունէի այդ տեղ, մի հատ ազնիւ և անարատ մարդը, բարեկամը ինձ մինչեւ դէպ ի կեանքի մութ և խաւար օրերը՝ երբ եղայր եղարից սովոր է շատ անգամ փախչել, այդ բանից եւ ամենեին զրկուած եմ այս տեղ. Վիշտը և տառապանք հարիւրաւորք, բայց միտթարութիւն և թեթեռութիւն կեանքի բեռների մէջ, շատ փոքր: Տնից դէպ ի ուսումնարան, ուսումնարանից դիս ի տուն, և տանը մտածութիւնք և աշխատութիւնք, հոգք ուսումնականք և նիւթականք—ահա Քեզ իմ կեանքիս բովանդակութիւնը: Բարեկամ տակաւին դտած չեմ Թիֆլիզում, բարեկամ, որ իմ ցաւս համարէր իւրը. այս մի քանի ազնուամիտ մարդիկ, որ փոքր ի. շատէ մօտակայ և օդնական ինձ. Պոցա շարքում գերագաս և բարձրիգլուխ կանգնած է մեր Յակովը Սերոբեանցը, որդիական և բարեկամական սիրով առաջարկելով ինձ իւր սպասաւորութիւնը, երբ կարիք կար այս բազմակարիք թանդ քաղաքում, ուր մարդիկ կաշի են քերթում և տիկ են հանում, ևթէ որ և իցէ հաշիւ ունես նոցա հետո: Սերոբեանցից յետոյ շատ բարեմիտ է առիս Յարութիւն Յովհաննիսեան մեծ բժիշկը, որ դարմանատար է նոյնպէս մեր ընտանիքին. խօսքով ու գործով, որպէս և որչափ կարող է, իսկոյն ձեռնոտու է ինձ:

Մեր հոգաբարձուների կողմից մինչեւ այժմ ոչինչ չնորհ տեսած չեմ. Պոցանից խնդրած էի ես ընծայել ինձ 500 մանէթ վասն բարեկարգելու. իմ նոր տնտեսութիւնը Թիֆլիզի մէջ, որպէս սովոր է առնել տէրութիւնը, երբ կարգվում է մի նոր պաշտօնեայ. բայց դոքա ձգձգելով գործը այս ու այն կողմ, ումանք հայհոյելով զիս և արատաւորելով իմ գործակատարութիւնը, մինչեւ այժմ ոչինչ արած չեն. խորհրդի մէջ այնպէս վճռուեցաւ խնդիրը, որ ինձ պարտք տան մի տարի ժամանակով, և այդ պարտը մինչեւ այս բոպէս ստացած չեմ: Սենեակներս տակաւին, անկարասիք են ըստ մեծի մասին Ոչ. ես չունիմ ոչինչ պատճառ սիրելու և յարգելու այս մարդիկը. սոքա կամին միայն ինձանից աշխատութիւն և բոլորովին աշխատութիւն, բայց իմ կարիքս լցուցանել, կեանքի դժուարութիւնքը թեթեացացանել ինձ, այդ շատ հեռի է նոցա մտածութիւնից: Ես ըստ իմ բազմամասնեայ աշխատութեան համեմատ, արժանի էի կրկնապատիկ վարձատրութեան, քան թէ Մոսկուայում, մի աւելի հեշտ և դիւրին գործակատարութեան ասպարէզի մէջ: Ուղիղն անմ Զեզ, իմ տեղափոխութեամբ դէպ ի Թիֆլիզ, ծանրացաւ ինձ կեանքը, բայց թեթեացաւ ոչ, և լայն, իմ ծերութեան օրերում. Մինչեւ օրս, փառք Աստուծոյ, առողջ եմ, ախորժակա և քունս աւելի-

լաւ է քան թէ Մոսկուայում, որովհետեւ մինչև այժմ վայելում ենք Թիֆլիզում բաց և արձակ օդի քաղցրութիւնքը։ Զիւն չկայ գեռ ես, ցեխ և ապակեանութիւն միայն սկսում է ծանրացնել իմ մահառութիւնս և ճանապարհը այս տեղ առ հասարակ վատ են։

Անցեալ հոկտ. 12 հանդիսաւոր ակտ կատարեցինք ուսումնարանում, իմ խորհրդակցութեամբ։ Ճառեր ասուեցան, հաշիւ և համար տրուեցան ժողովրդեանը, թէ հոգաբարձուք ինչպէս էին լցուցած իւրեանց պարտականութիւնքը։ Կը տպուի շուտով մի տեսրակ այդ ճառերով և համարատութեամբ, այլև մի քանի ուսումնական աշխատութեամբ մեր վարժապետների, որոց մէջ կայ և խմու Զեզ ևս կուղարկեմ մի օրինակ։ միայն թէ կամեմ խնդրել Քեզանից, որ շուտով հասուցանես ինձ անուանքը այն պատուելի պարոնների Մոսկուայում, որ ըստ Զեր կարծիքի արժանի էին ստանալ այդ տեսրակը մեր հոգաբարձուների առաջմամբ։ որովհետեւ ցանկալի էր սոցա, որ ամենեքեան տեղեկանան Ներսիսեան ուսումնարանի գործունէութեանը։

Իմ ընտանիքը ողջ և առողջ են։ Նոքա ուղարկում են Քեզ իւրեանց սիրալից և մեծարական ողջոյնը։ Օր չէ անցնում, որ մենք թէ սեղանի վերայ և թէ այլ զիպուածների մէջ չչիշենք Զեր անունը, չքաղցրանանք Զեր յիշատակով և հողեպէս չոլանանք առ Զեզ, զէպի Մոսկուա։ Սլէքսանզրը յաճախում է դէպ ի Տէր Յակորեանի մասնաւոր կլանիկական գիմնազիան, ուր և ես զասատու եմ Հայկազեան և լատինական լեզուների։ Օլինկան պարապում է տակաւին տանը։ Միտ դնելով սորա նուազութեանը, չկամէի սորան շատ պարապեցնել, բայց պիանօյի համար կամիմ վարժապետ բռնել։ Խնդրեմ փոք սիրոյ ողջոյնը մատուցանել Մմբատ Շահազիզիանին և Երեմիա Սահակեանին և թողութիւն խնդրել նոցանից, որ մինչև այժմ չկարողացայ գրել նոցա, բայց մտադիր եմ շուտով լցուցանել այդ պարտքը։ Մինչև այս բոպէս չստացայ Լազարեանց Ինստիտուտի պրավինիէիզիքիմ արձակման թուղթը հանդերձ իմ Պուլյանի Շահակոմակարձեմ, սորա յետաձգութիւնը մի բարի խորհրդութ ունենայ, որովհետեւ Խաչատուր Յովակիմեանցը կամէր ինձ պարզեատրել մի բանու Զստացայ մինչև այսօր և կայսերապարդի հողի հրովարտակը, որոյ մասին ինձ տեղեկութիւն էր տուած պ. Գուլիելիչը։ Եւ այս տեղ ևս ժամանակ չունիմ տեղեկանալու այդ բանիդ։

Միրով և յարդանօք

Քո Ատեփանոս Նազարեանց։

20.

Թիֆլիս, 24 նոյեմբերի 1869.

Եղբայրապատիւ բարեկամ

Մելքոն Գասպարեանց.

Շատ ուրանիս եմ, որ յաճախ յաճախ առիթ եմ ստանում նամակ գրելու Ձեզ և խօսելու Ձեր հետ. իմ պատուական և հողեհարազատ բարեկամի հետ. Ես հաւատացած եմ, որ իմ նամակները երբէք կարող չեն ձանձրացնել զՁեզ, մանաւանդ որ այդ, միակ միիթարութիւնն է այնպիսի, միմեանցից տարածութեամբ անջառուած բարեկամների համար, որպիսի մեք եմք:

Այս բոպէիս դարձեալ մի խնդիր ունիմ առ Ձեզ, և սա պատկանում է իմ Թիֆլիզեան ազնիւ բարեկամներից մենի որդուն, որ այժմուս գտանվում է Մոսկուայում: Գա է 16 ամեայ որդին պարոն Արտազեանի, Արշակ Արտազեան որ ցանկանում է հայրը կարգել իրեւ աշակերտ ՅՌ պրակտիկա-պրակտիկայու ակադեմիո Մոսկուայում: Պատանին գտանվում է Մոսկուայի համալսարանի ստուդենտ Գալումովի մոտ: Պարոն Արտազով հայրը ինքը գրելու է Ձեզ և խնդրելու նոյն մասին, որպէս և պատուէր իւր որդուն, որ յանդիման լինի Ձեզ: Խնդիրը այն է, որ Դուք աշխատ լինէիք տանել զնա և յանձնել յիշեալ վաճառական ակադեմիայի կառավարիչներին, այն պայմանների հիման վերայ, որոց վերայ ընդունվում են այն տեղ աշակերտք: Հայրը ինքը, այր պատուաոր և ազնիւ, կուղարկէ Ձեզ հարկաւոր արծաթը, որչափ կը համայնք Դուք, վերահասու լինելով հատուցմանը: Ես մտածումնեմ որ և մեր հասարակաց բարեկամ Տէր Յարութիւն երէցը—որում ուղարկում եմ շատ և շատ ողջոյն—կարող էր Ձեզ օգնել այս գործի մէջ, որովհետեւ ծանօթ էր կոմմերցիական ակադեմիայի ինսպեկտօրին Ջևագօ(?):

Քաջայոյ լինելով, որ Դուք աշխատութիւն յանձն կառնուք արժանապէս անօրինել Արշակ Արտազեանի վիճակը, որպէս ցանկանում էր հայրը և ես խնդրում եմ իրեւ միջնորդ յանուն մեր բարեկամութեան, կամիմ կցել այս տեղ այն ծանօթութիւնը, որ հարկաւոր էր հարցաքննելով երիտասարդի զիտութիւնքը աշխատել, որ նա մտանէ այն դասատունը, որում արժանի է ըստ իւր նախապատրաստութեան:

Ամենեին Ձեր Ս. Նազարեանց:

Յ. Տէր-Յակոբեան: